— Դու այսպիսի մեծ Շէյխի մը աղջիկ ես, քեզ կը վայելէ՞ այսպէս վարուիլ քու ծառայներուդ հետ. խնդրեմ ելիր գնա տեղդ, որ ես էլ երթամ,— ըսաւ եւ ձայնը կը դողար կ'իրքեն:

Իսկ աղջիկը, որ արդէն իւր տարիքեն մեծ էր, ոչ մարմնով այլ ժամանակեն առաջ արթնութեամբ, որ տաք կլիմայի զաւկներուն բնական է, եւ ուր բարոյական դաստիարակութեան գաղափար անգամ չի կայ, ծիծաղելով պատասխանեց.

— Ի՞նչ բանէ կը վախես, ինչո՞ւ սիրտդ կը բաբախէ, հոգ մի ընէր, հայրս քեզ ինձ հետ ամուսնացնելու դիտաւորութիւն ունի. այնպէս կ'ըսէր մօրս, մեր օրէնքն է, որ երբ անհաւատ մը ճշմարիտ կրօնը, կ'ընդունի, պէտք է հաւատաց եալի հետ ամուսնանայ. դու լաւ գեղեցիկ երիտասարդ ես, ես քեզի կը հաւնիմ:

— Բայց տիրուհի, խնդրեմ, զիս թող, որ երթամ, հիմա այսպիսի բաներու վրայ խօսելու ժամանակ չէ, կէս-գիշերը մօտ է…

— Այդ վնաս չունի. ես քուն չունիմ:

— Գրիգորի ճակտեն քրտինքը ջուրի պէս կը վազեր, եւ այդ աղջիկը իր ծնկվներուն վրայ՝ ձեռքը ուսին վրայ այնպիսի սոսկում իրեն կ'ազդէր իբր թէ վագրի մը ձագ գիրկը նստեր եւ ճիրանները ծոծրակին մէջ մխած լինէր, եւ որ մեծն էր՝ բռնութեամբ մէկդի նետել կը վախեր, ուստի յանկարծ ուշադրութիւն մը ձեւացնելով՝

— Էսմա, ոտքի ձայն է, մարդ կ'ուգայ,— ըսաւ այլայլած, եւ աղջիկը կապկի մը պէս սատկեց ելաւ ուշ գնելու, եւ Գրիգոր առանց րոպէ մը կորսնցնելու արագութեամբ սկսաւ հեռանալ, եւ կը լսէր աղջկան մռնչելը, որ ետեւեն՝

— Անհաւատի որդի, զիս կը խաբե՞ս, հէ՛,— կ'ըսէր:— Բայց փոխարէն կը հատուցանեմ քեզ, կը տեսնես…

Իսկ Գրիգոր գոհ այս փոքրիկ ճիւաղին ձեռքեն անվտանգ ազատելուն, առանց ետին նայելու գնաց երկնցաւ իւր խոտի բարդին վրայ. եւ բաղդատութիւն կ'ընէր մտքին մէջ այդ Շէյխին սատանայական աղջկան եւ Ռշտունեաց չքնաղագեղ Օրիորդին հետ մինչեւ քունն աչքերուն իջաւ եւ հանդարտեցուց յուզեալ սիրտը: